

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

30 ապրիլի 2015 թ

N 5

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ վճարողները նույն օրենքի 32 հոդվածով սահմանված ժամկետներում իրենց գրանցման վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ՝ Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից սահմանված ձևով:

ԱԱՀ-ի հաշվարկի ձևը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Ավելացված արժեքի հարկի հաշվարկի և ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևերը, դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 14-ի N 1423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2034-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին անդամակցելու հետ կապված Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետությունից ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման և Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) անձանց կողմից ԵՏՄ տարածքում այլ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) անձանց (կամ հակառակը) ծառայությունների մատուցման գործարքներից ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման հետ կապված համապատասխան կարգավորումներ սահմանված են պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» 18-րդ հավելվածով ներկայացված արձանագրությամբ («Անուղղակի հարկերի մասին» արձանագրություն), «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

ԱԱՀ-ի հաշվարկմանը և վճարմանը վերաբերվող կարգավորումների շրջանակներում համապատասխան տեղեկատվությունը պետք է արտացոլվի նաև ԱԱՀ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով և նպատակ ունենալով պարզաբանելու ԱԱՀ-ի հաշվարկի լրացման հետ կապված որոշ հարցեր` ***պաշտոնապես պարզաբանում եմ***

1. ԵՏՍ անդամ պետություններ ապրանքների արտահանման դեպքում` ապրանքների արտահանման գործարքների շրջանառությունը (արտահանման մաքսային արժեքը) լրացվում է ապրանքների փաստացի արտահանման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ հաշվարկի 9-րդ կետում: Ընդ որում, ԵՏՍ անդամ պետություններ ապրանքների արտահանման գործարքների շրջանառությունը` ապրանքների արտահանման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկի 9-րդ կետում արտացոլելուց հետո ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափի կիրառությունը հիմնավորելու համար արտահանողն իր հաշվառման վայրի հարկային մարմին պետք է ներկայացնի «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ` «Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենք) 3-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը` օրենքով սահմանված ժամկետներում:

2. Այն դեպքերում, երբ ԵՏՍ անդամ պետություններ ապրանքների արտահանման գործարքների նկատմամբ «Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի համաձայն առաջադրվում (հաշվարկվում) է ԱԱՀ պարտավորություն, արտահանման գործարքի շրջանառության (արտահանման մաքսային արժեքի) նկատմամբ կիրառելով 20 % դրույքաչափ, արտահանման գործարքի շրջանառությունը և դրա հիման վրա հարկային մարմնի կողմից առաջադրված (հաշվարկված) ԱԱՀ-ի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ԱԱՀ-ի հաշվարկի 11-րդ կետի [Ա] և [Բ] վանդակներում չեն արտացոլվում:

3. ԵՏՍ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով` ապրանքների փաստացի ներմուծելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկի 15-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է օրենքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (այդ թվում` ներմուծված այն ապրանքների, որոնց ներմուծման համար ԱԱՀ չի գանձվում), իսկ [Բ] վանդակում` Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի գումարը:

«Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն` հարկային մարմնի ներկայացրած գրավոր ծանուցագրի հիման վրա` ծանուցագրում նշված հարկման բազայի 80 տոկոսի և հարկ վճարողի կողմից հաշվարկված հարկման բազայի տարբերությունից ԱԱՀ-ի հաշվարկման դեպքում, ԱԱՀ-ի հաշվարկի 15-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է հարկման բազայի տարբերությունը, իսկ [Բ] վանդակում` այդ տարբերությունից հաշվարկված ԱԱՀ-ի գումարը: Հարկման բազայի տարբերությունը և այդ տարբերությունից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարները արտացոլվում են ծանուցագրի ներկայացման օրը կամ ծանուցագրի ներկայացման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում:

4. ԵՏՍ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմիններին վճարման ենթակա,

ինչպես նաև «Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան հարկման բազաների տարբերությունից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները, որոնք չեն վճարվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանում և որոնց մասով հաշվանցում կատարելու իրավունքի ձեռքբերման պահը Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հետաձգվում է մինչև վճարման պահը, լրացվում են ԱԱՀ-ի հաշվարկի 16.1-րդ կետում (ձեռքբերված ապրանքների մասով դեբետի հետաձգում):

5. ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերում (այդ թվում՝ ճշտված ներմուծման հարկային հայտարարագրերում) առանձնացված և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմիններին վճարած ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով հաշվանցման իրավունքը Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հետաձգվել էր նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում, արտացոլվում է ԱԱՀ-ի այդ գումարների վճարման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկի 16.2-րդ կետում (ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները արտացոլելով 16.2 տողի [Ա] վանդակում՝ որպես ԱԱՀ-ի դեբետի ավելացում):

6. ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված և Օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն հարկային մարմիններին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգված ապրանքների մասով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում Օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասին համապատասխան ԱԱՀ-ի վճարման պարտավորություն առաջանալու դեպքում ԱԱՀ-ի հաշվարկի 18-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով հարկման բազան, իսկ [Բ] վանդակում՝ առաջացած ԱԱՀ-ի պարտավորության գումարը: ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ևս ԱԱՀ հաշվարկի 18-րդ կետը հաշվարկին չի մասնակցում:

**Նախարար՝**

**Գ. Խաչատրյան**